ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Շնչառական սինցիտիալ վիրուս (RSV) Կանխարգելիչ հակամարմին

Ի՞նչ է Ձեզ անհրաժեշտ իմանալ

Ինչո՞ւ պատվաստվել RSV-ի կանխարգելիչ հակամարմնով:

Շնչառական սինցիտիալ վիրուսի (Respiratory Syncytial Virus, RSV) կանխարգելիչ հակամարմինը կարող է կանխել RSV-ի կողմից առաջացող ծանր թոքային հիվանդությունը:

RSV-ն տարածված շնչառական վիրուս է, որը սովորաբար առաջացնում է թեթև, մրսածություն հիշեցնող ախտանիշներ, սակայն նաև կարող է ազդել թոքերի վրա: RSV վարակի ախտանիշները կարող են ներառել հարբուխ, ախորժակի անկում, հազ, փռշտոց, ջերմություն կամ խզզոցով շնչառություն:

RSV-ով կարող է հիվանդանալ ցանկացած անձ, և գրեթե բոլոր երեխաները ստանում են RSV-ի վարակը մինչև 2 տարեկան դառնալը: Չնայած նրան, որ երեխաների մեծ մասն ապաքինվում է RSV վարակից մեկ կամ երկու շաբաթվա ընթացքում, RSV վարակը կարող է վտանգավոր լինել նորածինների և որոշ փոքր երեխաների համար՝ առաջացնելով շնչառության դժվարություն, թթվածնի ցածր մակարդակ և ջրազրկում: Միացյալ Նահանգներում RSV-ն բրոնխիոլիտի (թոքերի փոքր շնչուղիների բորբոքում) և թոքաբորբի (թոքերի վարակ) ամենատարածված պատճառն է 1 տարեկանից փոքր երեխաների շրջանում: RSV-ով հիվանդացող երեխաները գուցե հոսպիտալացման կարիք ունենան, իսկ որոշները գուցե նույնիսկ մահանան:

RSV-ի կանխարգելիչ հակամարմիններ

RSV-ի կանխարգելիչ հակամարմինը (ընդհանուր անունը՝ Nirsevimab, ապրանքային անվանումը՝ Beyfortus) պատվաստում է, որը կանխում է RSV-ի ծանր հիվանդացությունը նորածինների և փոքր երեխաների շրջանում: Հակամարմինները սպտակուցներ են, որը մարմնի իմունային համակարգն օգտագործում է վնասակար մանրէների դեմ պայքարելու նպատակով: Ինչպես ավանդական պատվաստանյութերը, կանխարգելիչ հակամարմինները հանդիսանում են պատվաստումներ, որոնք պաշտպանություն են ապահովում կոնկրետ հարուցիչի դեմ: Մինչդեռ երկուսն էլ համարվում պատվաստումներ, իմունիտետի տրամադրման ձևը տարբեր է: Nirsevimab-ը պատվաստում է, որը հակամարմիններ է տրամադրում անմիջապես ստացողին: Ավանդական պատվաստանյութերը պատվաստումներ են, որոնք խթանում են ստացողի իմունային համակարգը հակամարմիններ արտադրելու նպատակով:

RSV-ի սեզոնին (սովորաբար աշունից գարուն) ծնված նորածինները պետք է ստանան RSV պատվաստման մեկ դեղաչափ ծնունդից հետո 1 շաբաթվա ընթացքում: Նորածիններից շատերը, որոնց մայրիկները ստացել են RSV-ի դեմ պատվաստանյութ, կարիք չկա, որ նաև Nirsevimab ստանան: Երկուսն էլ պաշտպանում են նորածիններին ծանր RSV-ից հակամարմիններ ապահովելու միջոցով՝ կա՛մ մայրիկից նորածնին, կա՛մ անմիջապես նորածնին: Նորածիններից շատերն ամենայն հավանականությամբ միայն կա՛մ RSV-ի մայրական պատվաստանյութի, կա՛մ Nirsevimab-ի (ոչ երկուսն էլ) պաշտպանության կարիքը կունենան: Ամեն դեպքում, կարող են որոշակի իրավիճակներ լինել, որոնց դեպքում Nirsevimab-ը խորհուրդ կտրվի նորածնին՝ մոր կողմից RSV-ի դեմ պատվաստանյութը ստանալուց հետո:

RSV-ի սեզոնից հետո ծնված 8 ամսականից ավելի փոքր նորածինները պետք է ստանան RSV-ի պատվաստման մեկ դեղաչափ RSV-ի իրենց առաջին սեզոնից (սովորաբար աշնանը) անմիջապես հետո, բայց 8 ամսականից ավելի փոքր նորածինները, ովքեր դեռ չեն ստացել որևէ դեղաչափ, կարող են դեղաչափ ստանալ սեզոնի ընթացքում ցանկացած ժամանակ:

Որոշ նորածիններ և փոքր երեխաներ, ովքեր RSV-ով ծանր հիվանդանալու բարձր ռիսկի տակ են, գուցե RSV հակամարմնի մեկ դեղաչափի կարիք ունենան RSV-ի իրենց երկրորդ սեզոնից առաջ և դրա ընթացքում:

RSV-ի կանխարգելիչ հակամարմինները կարող են տրվել նույն ժամանակում, ինչ նորածինների և փոքր երեխաների համար կանխարգելիչ նպատակով խորհուրդ տրվող պատվաստանյութերը:

U.S. Department of Health and Human Services
Centers for Disease Control and Prevention

Խոսե՛ք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ

Ասե՛ք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին, եթե կանխարգելիչ հակամարմին ստացող անձն ունի.

- RSV-ի կանխարգելիչ հակամարմնի (Nirsevimab) կամ դրա բաղադրիչներից որևէ մեկի հանդեպ լուրջ ալերգիկ ռեակցիաների պատմություն,
- Արյան շրջանառության խանգարում կամ
- Միջին կամ ծանր, սուր հիվանդություն:

Որոշ դեպքերում Ձեր երեխայի բժշկական ծառայությունների մատակարարը կարող է որոշել հետաձգել RSV-ի դեմ կանխարգելիչ հակամարմինների տրամադրումը մինչև հետագա այցը:

Աննշան հիվանդություն ունեցողները, օրինակ՝ մրսածություն, կարող են անվտանգ կերպով ստանալ RSV-ի կանխարգելիչ հակամարմին: Անձինք, ովքեր միջին կամ ծանր հիվանդ են, սովորաբար պետք է սպասեն մինչև կազդուրվելը:

Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը Ձեզ կարող է հավելյալ տեղեկություններ տալ:

RSV-ի կանխարգելիչ հակամարմինների հանդեպ ռեակցիաների ռիսկեր

RSV-ի կանխարգելիչ հակամարմին ստանալուց հետո Ձեր երեխան գուցե ունենա ժամանակավոր ցավ, կարմրություն, այտուց ներարկման հատվածում կամ ցան:

Ինչպես ցանկացած դեղամիջոցի դեպքում, շատ փոքր հավանականություն կա, որ RSV-ի դեմ պատվաստանյութը լուրջ ալերգիկ ռեակցիայի, այլ լուրջ վնասվածքի կամ մահվան պատճառ կհանդիսանա:

Ալերգիկ ռեակցիան կարող է առաջանալ, երբ Ձեր երեխան դուրս գա հիվանդանոցից կամ կլինիկայից: Եթե լուրջ ալերգիկ ռեակցիայի նշաններ (օրինակ՝ եղնջատենդ, դեմքի և կոկորդի այտուցվածություն, դժվարացած շնչառություն, արագ սրտխփոց, գլխապտույտ կամ թուլություն) եք նկատում, զանգահարեք 9-1-1 և տվյալ անձին մոտակա հիվանդանոց տարեք:

Զանգահարե՛ք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին, եթե նկատում եք Ձեզ մտահոգող այլ ախտանիշներ:

Ի՞նչ անել լուրջ խնդրի դեպքում:

Եթե Ձեր երեխան ստացել է RSV-ի կանխարգելիչ հակամարմին՝ միաժամանակ չստանալով պատվաստանյութ, և անբարենպաստ ռեակցիա եք կասկածում, Դուք կամ Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կարող եք հաշվետվություն ուղարկել https://www.fda.gov/medwatch կայքէջով կամ զանգահարել 1-800-FDA-1088:

Եթե Ձեր երեխան ստացել է RSV-ի կանխարգելիչ հակամարմին՝ միաժամանակ ստանալով պատվաստանյութ, և անբարենպաստ ռեակցիա եք կասկածում, Դուք կամ Ձեր բժշկական ծառայությունների մատակարարը կարող եք հաղորդել այդ մասին Պատվաստանյութերի անբարենպաստ երևույթների վերաբերյալ հաշվետվությունների համակարգին (Vaccine Adverse Event Reporting System, VAERS) https://vaers.hhs.gov/ կայքէջում կամ զանգահարել 1-800-822-7967 հեռախոսահամարով: Ձեր հաշվետվությունում նշեք, որ Ձեր երեխան ստացել է RSV-ի դեմ պատվաստումը պատվաստանյութի հետ միասին:

Նշում. MedWatch-ը և VAERS-ը միայն նախատեսված են հաշվետվությունների արձագանքների նպատակով: MedWatch-ի և VAERS-ի անձնակազմի անդամները չեն տրամադրում բժշկական խորհրդատվություն:

Ինչպե՞ս կարող եմ ավելին իմանալ:

- Դիմե՛ք Ձեր բժշկական ծառայությունների մատակարարին:
- Զանգահարե՛ք Ձեր՝ տեղական կամ նահանգային առողջապահության վարչություն:
- Այցելե՛ք ԱՄՆ Մննդի և դեղերի վարչության (Food and Drug Administration, FDA) կայքէջ՝ Drugs@FDA. FDA-ի կողմից հաստատված դեղեր:
- Կապվե՛ք Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման կենտրոնների (Centers for Disease Control and Prevention, CDC) հետ՝
    - Զանգահարե՛ք 1-800-232-4636 (1-800-CDC-INFO) հեռախոսահամարով կամ
    - Այցելե՛ք CDC-ի կայքէջ՝ https://www.cdc.gov/rsv/about/prevention.html

Armenian translation provided by Immunize.org